ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

"03" "05" 2021թ.

Թիվ 21133-26

Գեղարքունիքի մարզպետ
պարոն Գնել Սանոսյանին

Հարգելի պարոն Սանոսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ հետևյալ հարցերի մասին.

1. Արդյոք Ձեր մարզպետարանում գործու՞մ է հասարակական կազմակերպությունների, փորձագետների, քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների մասնակցությամբ խորհուրդ կամ խորհրդակցական որևէ այլ մարմին: Եթե այո՝ խնդրում ենք տեղեկատվություն ներկայացնել այդ խորհուրդ(ներ)ի կամ մարմինների մասին՝ ներառյալ ներկա կազմը, 2019-2020 թվականներին իրականացված նիստերի կամ հանդիպումների քանակը, արձանագրությունները, առկայության դեպքում՝ կայքէջի հղումը, որտեղ կարող ենք լրացուցիչ տեղեկատվություն գտնել այդ խորհուրդ(ներ)ի կամ մարմինների մասին :
2. 2019-2020թթ. ընթացքում մարզպետարանում իրականացվե՞լ են արդյոք հանրային քննարկումներ կամ հանրային նշանակության թեմաներով այլ բաց հանդիպումներ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հանրության տարբեր խմբերի մասնակցությամբ: Եթե այո, քանի՞ քննարկում է իրականացվել: Խնդրում ենք տրամադրել քննարկումների ցանկը՝ ներառելով յուրաքանչյուր քննարկման ամսաթիվը, թեման, մասնակիցների քանակը, կցել քննարկումների արձանագրությունները, առկայության դեպքում նշել քննարկումների մասին այլ տեղեկատվություն կամ կայքէջի հղումներ:
3. Խնդրում ենք տրամադրել մարզպետարանում խորհրդակցական մարմինների աշխատանքը համակարգող և/կամ հանրային մասնակցության ապահովման համար պատասխանատու պաշտոնյայի կոնտակտային տվյալները՝ հանրային մասնակցության հետ կապված լրացուցիչ հարցերի դեպքում դիմելու համար:

Խնդրում ենք հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում՝ պատասխանն ուղարկելով info@transparency.am էլեկտրոնային հասցեին:

Պատասխանատու անձ՝ Տաթևիկ Մարգարյան:

Հեռախոսահամար՝ 091 50 07 39

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

Սոնա Այվազյան
ԹԻՀԿ գործադիր տնօրեն